

Կ. ԴԱՐՅԱՆ

# Լեռնային ԱՐՇԱՎՆԵՐ

ԵՐԵՎԱՆ — 1949



91(-0)(47.925) 19481

7-27 / 7th grade, 4th

Intensivierung unpolarisiert.

32

32

|     |     |     |
|-----|-----|-----|
| ... | ... | ... |
| ... | ... | ... |
| ... | ... | ... |
| ... | ... | ... |



ՀԱՅԿ. ՍՍՌ. ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄ

796.52

7- - 27

ՀԱՅՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ 3

Վ. ԴԱՐՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱՆ Ե 1949

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԻ ԶԱՅՐԵՆԻ ԵՐԿԻՐԸ

ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՇԱՎՆԵՐ



ԵՐԵՎԱՆ

1949



ՀԱՅԿԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼ  
ԲԱՆԿԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼ

ՀԱՅԿԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼ

ՀԱՅԿԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼ

ՀԱՅԿԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԵՆՏՐԱԼ



## ԼԵՌՆԱՅԻՆ ԱՐՇԱՎՆԵՐ

Լեռնային արշավները կամ ալպինիզմը, որպէս սպորտի ամենատարածված ձևերից մեկը, անվախուս-  
թյուն, անվեհերութիւն և բնութիւն տարերքի դէմ մա-  
քառել, բնութիւնն ընկճել է սովորեցնում կենսախիւնդ,  
մեր երկիրն ու նրա վեհապանծ լեռները սիրող սովե-  
տական երիտասարդութեանը:

Ալպինիստական սպորտը դաստիարակում է և  
աճեցնում մեր մեծ Հայրենիքին, Լենինի-Ստալինի  
մեծ գործին նվիրված կարգապահ, ուժեղ, ճարպիկ,  
դիմացկուն, համարձակ և համառ Սովետական Միու-  
թեան քաղաքացիներ: Նրանք լավագոյն կերպով տի-  
րապետում են լեռները բարձրանալու, վերելքներ կա-  
ռարելու տեխնիկային և լեռներում գործելու պայ-  
մաններին:

Ալպինիզմը դարձել է Սովետական Հայաստանի  
երիտասարդութեան ամենասիրելի սպորտը և հանդի-  
սանալով բացառապէս սովետական իշխանութեան  
ծնունդ, իր ծագման օրից ընդունել է մասսայական  
բնույթ, և օրեցօր այդ շարժման մեջ է ներգրավում  
Սովետական Հայաստանի երիտասարդութեան ավելի  
ու ավելի լայն մասսաների:

Մեզ մոտ տեղծված են բոլոր նախադրյալները,  
որպէսզի աճի և զարգանա սովետական մարդկանց  
ալպինի մի նոր սերունդ, որը, ինչպէս ասում է ընկեր



Յտալիներ, լինի «առողջ և կենսուրախ, բնդունակ ար-  
ժանի բարձրության վրա դնելու տովետական երկրի  
հզորությունը և պաշտպանելու այն թշնամիների կող-  
մից կատարվող ոտնձգություններին»:

Մեծ առաջնորդի այդ խմաստուն ցուցումը բնորոշ  
է և մեծ չափով վերաբերում է նաև ալպինիզմին: Դեռ-  
ևս Համկ(բ) Պարտիայի 18-րդ համագումարում ընկեր  
Մոլոտովն իր զեկուցման մեջ ասել է այն մասին, որ  
մենք ոչ միայն պետք է դաստիարակենք բարձր դի-  
տակցությամբ օժտված կոմունիզմ կառուցողներ, այլև  
պետք է աճեցնենք և դաստիարակենք ամրակազմ, հա-  
մարձակ և ուժեղ մարդկանց, որովհետև «հասել է ժա-  
մանակը, երբ առաջ են քաշվում դաստիարակչական  
բնույթ կրող խնդիրներ, աշխատավորների կոմունիս-  
տական դաստիարակության խնդիրները... Իսկ կոմու-  
նիստական կարելի է անվանել միայն այնպիսի դաս-  
տիարակությունը, որը կբարձրացնի մեր մոբիլիզա-  
ցիոն պատրաստությունը և մեր բոլոր բնդունակու-  
թյունները՝ անձնվեր պայքարի և նորանոր մարտերի  
ելնելու հանուն կոմունիզմի հաղթանակի»:

Այդպիսով, ինչպես տեսնում ենք, ավելի ու ավե-  
լի է մեծանում ալպինիզմի նշանակությունը մեր  
երկրի պաշտպանության գործում, այն դառնում է մեր  
ժողովրդի կոմունիստական դաստիարակության ալ-  
տիվ գործոններից մեկը: Ահա լայն հնարավորությու-  
ներ ընձեռնող մի բնագավառ, ալպինիզմի բնագա-  
վառը, որը միլիոնավոր մարդկանց մեջ դաստիարա-  
կում է հայրենասիրական վառ զգացմունքներ, իր սո-  
ցիալիստական հայրենի երկիրը հանաչելու և հարկ



հղած դեպքում այն կրժքով պաշտպանելու անմար  
զդացմունքներ:

Մեծ է ալպինիզմի նշանակութունը նաև ուրիշ  
տեսակետից. այն հանդիսանում է որպես աշխատա-  
վորության, և հատկապես երիտասարդության կուլ-  
տուրական հանգիստը կազմակերպելու հրաշալի մի-  
ջոցներից մեկը:

Ն. Կ. Կրուպսկայան, Վ. Ի. Լենինի մասին գրած  
իր «Հիշողություններ»-ի մեջ պատմում է այն մասին,  
թե ինչպես Լենինի համար լաբլաժ աշխատանքների  
օրերին, նրա սմենալաժագույն հանգստի միջոցը եղել  
է լեռներում շրջագայելը:

Ն. Կ. Կրուպսկայան գրում է. «1915 թվին, Յիմ-  
մերվալդի կոնֆերանսից հետո, որը Վ. Իլիչից շատ  
ներվային էներգիա և ֆիզիկական ուժ խլեց, հարկա-  
վոր եղավ մի քանի օր քայլել լեռների վրա և Սյորեն-  
բերգի շրջակայքը, մինչև որ Իլիչը հանգստացավ»<sup>\*</sup>:

Այնպե՛ս և Շվեյցարական լեռներում կատարած  
Վ. Իլիչի շրջագայությունների մասին Ն. Կրուպսկա-  
յան պատմում է հետևյալը. «Ճաշից հետո, երբեմն էլ  
ամբողջ օրով, գնում էինք լեռները:

Իլիչը շատ էր սիրում լեռները, սիրում էր երեկո-  
յան դեմ բարձրանալ Ռոտհորնի բլուրները, երբ բարձ-  
րում աննման տեսարան էր, իսկ վարում, ոտներիդ  
տակ՝ վարդագույն մառախուղ, կամ թափառել Շրատ-  
տենֆլույի վրա. այդ սարը մեզանից երկու կիլոմետր  
հեռու էր գտնվում, մենք «Անիծված քայլեր» անունն  
էինք տալիս նրան:

<sup>\*</sup> Ն. Կ. Կրուպսկայա, Հիշողություններ Լենինի մասին,  
էջ 439—440, հրատ. 1933 թ., Մոսկվա:



Անկարելի էր բարձրանալ նրա տափակ ու լայն գագաթը. ամբողջ սարը ծածկված էր գարնանային առվակներից ծածկված քարերով... Հավաքում էինք ալպյան վարդեր, պտուղներ:

...Իլիշի՝ Յիմմերվալդից վերադառնալու հաջորդ օրը մենք բարձրացանք Ռոտհորն: Բարձրացանք շատ հանդիսավոր տրամադրությամբ:

Մեծ սիրով լեռնային վերելքներ էր կատարում նաև բոլշևիկյան պարտիայի մեծ տրիբուն, ընկեր Ստալինի հավատարիմ զինակից Սերգեյ Միրոնովիչ Կիրովը:

Դեռևս 1910 թվի մայիսին, ընկեր Կիրովը թաքնվելով ցարական ժանդարմներից, Սիբիրից վերադարձավ Վլադիկավկազ (այժմ Ջաուջիկաու): Այստեղ նա սկսեց աշխատել ուսերեն լեզվով լույս տեսնող տեղական «Թերեք» թերթում:

Վլադիկավկազի և ընդհանրապես Կովկասի հետ են կապված Սերգեյ Միրոնովիչի ունույցիոն գործունեության շատ տարիները: Իր գրական աշխատանքները «Թերեք» լրագրում Կիրովը հրաշալի կերպով կարողանում էր համատեղել ունույցիոն-պրոպագանդիստական իր անդուլ գործունեության հետ՝ Կովկասի բազմազգ ժողովուրդների մեջ:

Մենակ կամ իր մարտական ընկերների հետ, Սերգեյ Միրոնովիչը գնում էր հեռավոր կամ մոտակա էքսկուրսիաների՝ դեպի լեռնային կիրճերը, դեպի նրանց ձյունապատ գագաթները:

Նա լինում էր նաև ալպիական մարգագետիններում, որտեղ արածում էին տեղի իշխանների պատկանող հազարավոր գլուխ տնասուններ:



Սերգեյ Միրոնովիչը բարձրանում էր հեռավոր  
առույնները։ Նա բոցավառ ճառերով հանդես էր գալիս  
Ալադիրի բանվորների մոտ և նրանց հասցնելով բոլ-  
շևիկյան ճշմարիտ խոսքը, ամեն տեղ կոչ էր անում  
տապալել կալվածատերերի և կապիտալիստների պե-  
տական կարգերը։

Կաբարդինական շքավորության ունուցիոն վե-  
րելքի օրերին Կիրովը էլբրուսի կիրճերում համախում-  
բում էր ցիր ու ցան հովիվներին ու անասնապահնե-  
րին և նրանց նախապատրաստում համատեղ ելույթի։

Կիրովը սիրում էր լեռները, սիրում էր բնությու-  
նը, սիրում էր անվախ և ազնիվ լեռնցիներին։

1910 թվին Սերգեյ Միրոնովիչը իրեն հատուկ սի-  
րով և «նորի զգացումով» ընդունում է տեղի ընկեր-  
ների առաջարկը՝ կազմակերպել այն ժամանակվա  
խմաստով բացառիկ մի ձեռնարկություն՝ վերելք դեպի  
Կազբեկի գագաթը, մեկը այն «հինգհազարական» գա-  
գաթներից, որը մտնում է Կովկասի ամենաբարձր լեռ-  
ների հնգյակի մեջ։

Կիրովի հետ միասին այդ վերելքին մասնակցում  
էր նաև Անդրեյ Իգնատյեվիչ Դուխովսկին՝ Դեվդորակի  
պղնձահանքերի շտեյգերը, որը մի քանի արշավներ էր  
կազմակերպել դեպի Կազբեկի գագաթը և մի քանի  
տարի զբաղվել էր այդ սարի սառցադաշտերի ուսում-  
նասիրությամբ։

Այս խմբին մասնակցում էր նաև Յանի Բուզուլ-  
դանովը, Գվիլետի գյուղի բնակիչ, Կազբեկի լավա-  
գույն ուղեկցողներից մեկը, որը 1868 թվին ուղեկցել  
էր Կազբեկի գագաթը բարձրացող օտարերկրյա ալ-  
պինիստ Դուգլաս Ֆրեշֆիլդին։



13 տարի անց, 1923 թվին,— Ս. Մ. Կիրովի՝ Կազբեկի գաղաթը բարձրանալուց հետո,— սովետական արևավառ Վրաստանի 25 ալպինիստներ, պրոֆ. Նիկոլաձեի գլխավորությամբ վերելք կատարեցին դեպի Կազբեկի գագաթը, որով և հիմք դրվեց Սովետական Միության ալպինիզմին։

Իր տպավորությունները, ալպինիստական այդ վերելքի մասին, Սերգեյ Միրոնովիչը գրի է առել իր «Վերելք դեպի Կազբեկ» ակնարկում, որը ժամանակին հրատարակված է «Թերեք» թերթում\*։

Նա այսպիսի հիասքանչ տողերով է նկարագրում իր այդ վերելքը.

«Լինել Կազբեկի գագաթին... օ՛հ, այդ գերանվախություն է։ Դա հնարավոր է միմիայն գերբնական ջանքերի շնորհիվ, երկաթյա առողջություն և հազվագյուտ դիմացկունություն ունեցող մարդու համար։

«Վեհանիստ Կազբեկը լռությամբ ուղեկցում էր մեզ, կարծես ամսոսալով, որ նա մեզ չհաղորդեց այն բոլորը, ինչ թաքնված է նրա սառույցների և ձյունների սառն ընդերքում և մռայլ կիրճերում, ուր արեգակի շողերը հազիվ են մուտք գործում։

«Արևելքից, ամպերի խորքից հանդիսավոր կերպով բարձրանում է առավոտյան պայծառ արևը, իր ոսկեզօծ ջերմ ճառագայթներով ողողելով ձյունապատ դաշտերը և Կազբեկի գագաթը։

«Դժվար է պատկերացնել մի մարդու, որն ունի գոնե մի կաթիլ զգացմունք, որ չհամակվի երկյուղածությամբ՝ դիտելով այս տեսարանը...

\* Տե՛ս „На суше и на море“ ամսագիրը, 1939 թ. № 12, էջ 7. Гос. изд. Физкультура и спорт.





Նկ. 1. Կազմիկ լոր

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՂԱՏՆԱԿԱՆ ԼԵՐԱԿԱՆ



«Ի՞նչ ընդարձակություն... Ի՞նչ ապշեցուցիչ դե-  
զեցկություն ունեն այս բոլոր ձյունապատ հսկաները,  
որոնք վեհորեն բարձրանում են դեպի երկինք»,—  
գրում է Սերգեյ Միրոնովիչ Կիրովը իր այդ ակնար-  
կում:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ ալպինիզմը  
մեր երկրում զարգանում է ոչ միայն որպես լող  
սպորտ, այլ որպես սպորտի ժողովրդական մի այն-  
պիսի ձև, որը ընդգրկելով իր մեջ միլիոնավոր մաս-  
սաներին, միաժամանակ ծառայում է այդ մասսաների  
կուլտուրական հանգստի կազմակերպման նպատա-  
կին:

Այդ հարցերին է նվիրված ՀամԿ(բ)Պ Կենտրոնա-  
կան Կոմիտեի 1948 թվի դեկտեմբերի 28-ի պատմա-  
կան որոշումը, որտեղ ասված է. «Լայնորեն զարգաց-  
նել ժողովրդական սպորտի ձևերը՝ որսորդությունը  
և տուրիզմը»<sup>\*</sup>:

Կոմունիստական պարտիան, Սովետական կառա-  
վարությունը և անձամբ ընկեր Ստալինը, միշտ էլ բա-  
ցածիկ ուշադրություն են հատկացրել ալպինիզմի  
զարգացմանը՝ որպես լեռնային տուրիզմի, որպես  
Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի լավագույն ձևե-  
րից մեկի:

\* \* \*

Արագած լեռը կուլտուրայի իր հուշարձաններով,  
իր հրաշալի բուսականությամբ և լեռնային օդով,  
հնագույն ջրաբաշխական սիստեմով, ամառային ալ-  
պիական արոտավայրերով, ամենաբարձր, իր զարմա-

<sup>\*</sup> Տե՛ս «Правда», передовая от 30 января 1949 г. № 30  
(11137).



նալիորեն գեղեցիկ խառնարանով՝ ծածկված հավիտե-  
նական ձյունաշերտերով, ոչ միայն Սովետական Հա-  
յաստանի ալպինիստների լեռն է, ալպինիստական վե-  
րելքների համար ամենալավագույն օբեկտը, այլև նա  
հանդիսանում է աշխարհի ամենագեղեցիկ լեռներից  
մեկը:

Արագածը վաղուց ի վեր գովերգվում է նրա լան-  
ջերին ապրող աշխատավորության կողմից: Նրան եր-  
գում են հայ բանաստեղծները:

Հայ մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահակյա-  
նը իր լավագույն երգերի ներշնչումներն ու մտահղա-  
յումներն ստացել է Արագածից, հատուկ տեղ տալով  
«Ալագյազի մանիներին»:

Ալագյազը աստղերի մեջ՝  
Ադամահոդե թագը գլխին.  
Սարերեն վեր, ամպերեն վեր,  
Թիկն է տվել զմրուխտ գահին:

Սինամ — հավքի թևեր ունիմ,  
Թունիմ կերթամ Ալագյազ,  
Ճակտիս աստղե պսակ ունիմ,  
Սրտիս միջին — զառ երազ:

...Արի գիրկս մարմար Զարոս,  
Թռչենք, երթանք Ալագյազ:

Բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը իր մի  
բանաստեղծությամբ արտահայտում է իր յարից հե-  
ռու ապրող սիրահարի փափագը, հույսը, թե ե՞րբ  
պետք է բացվեն Արագած սարի ճամբեքը, որ նա  
գնա, հասնի իր յարին:



Ալազյազ բարձր սարին,  
Զին ա կիտվել կատարին,  
Սարի ճամբեք, բայ էլեք,  
Էթամ, հասնեմ իմ յարին:

Արազածը, սկսած իր ստորոտից մինչև շորս դա-  
գաթները, դարձել է մեր ժողովրդի համար սիրելի մի  
վայր, որին, ինչպես աշուղ Թոմաս Օղլին է ասում  
«Զի փոխի աշխարհի հետ»:

Իսկ աշուղ Շիրազը, այնպես է երգում Արազածը.

Անմահական հողիդ ու ջրիդ մեռնեմ,  
Ծաղկո՞ւնքով դարդարված, պայծառ Ալազյազ,  
Լանջերիդ ման գալով, կարոտս առնեմ,  
Հոտավետ բուրաստան, պայծառ Ալազյազ:

Աշուղ Աշխուժն ասում է.

Զով հովերի, օղի, ջրի հենարան,  
Ամառային անուշ քնո օրօրան,  
Գետակների առուների երգարան,  
Վառ աստղերն էլ քեզ կսիրեն, Ալազյազ:

Արազածը երգում են իրենց բանաստեղծություն-  
ներում սովետահայ բանաստեղծները՝ Նաիրի Զարյա-  
նը, Շիրազը, Սարմենը և մյուսները: Նրանք մեծ ոգե-  
վորությամբ են երգում Արազածի լանջերին ծաղկող  
երջանիկ կյանքի մասին, վեհ ու հպարտ Արազածի  
մասին, և ամենամեծ նվերը սովետական երկրի սրբ-



տին—Կրեմլին, սոցիալիստական երկրի ժողովուրդնե-  
րի սիրելի առաջնորդ Մեծ Ստալինին—Արագածից են  
տանում:

—Ո՛վ Արագած հպարտ ու վեհ,  
Գնում եմ ես Կրեմլը վառ,  
Ի՞նչ ես տալիս, տանեմ նվեր,  
Մեր ցնծության, մեր հոր համար:

— Իմ լանջերին անվերջ հնչող,  
Երջանկության երգ ու տաղից,  
Փնջի՛ր երգեր արևաշող—  
Ահա ընծաս երախտալից:

\* \* \*

Ամեն տարի, թե բքաշունչ ձմռանը, թե ամառվա  
արևակեղ ամիսներին, հազարավոր երիտասարդ ալ-  
պինիստներ վերելքներ են կատարում դեպի Արագածի  
կատարները:

Եվ ո՛չ միայն սովետական երկրի երիտասարդու-  
թյունն է ձգտում դեպի Արագած, այլև հնագույն ժամա-  
նակներից, սկսած մեր պատմության ուրարտական շրջ-  
անից, բազմաթիվ մարդիկ ձգտել են բարձրանալ Արա-  
գածի գագաթը, որոնց թվում նաև բազմաթիվ գիտնա-  
կաններ և ճանապարհորդներ:

Այսպես, դեռևս 1843 թվականի հուլիս ամսին,  
Արագածի գագաթն է բարձրացել ուսումնասիրելու  
նպատակով գիտնական Մորից Վագները, որն իր  
«Ճանապարհորդությունն ի Հայաստան» աշխատության  
մեջ մանրամասն նկարագրում է իր այդ վերելքը: Վագ-  
ներին իր այդ ճանապարհորդության ընթացքում ու-



դեկցել է հայ խոշորագույն գրող և առաջին հայ աշ-  
պինիստ Խաչատուր Աբովյանը, որը դեռ 1829 թվա-  
կանին պատմութեան մեջ առաջինը բարձրացավ Արա-  
րատի գաղաթը, Դորպատի համալսարանի պրոֆեսոր  
Պարրոտի հետ միասին:

Վերև հիշված իր աշխատութեան մեջ Մ. Վազները  
այսպէս է նկարագրում Արագածը.

«Արագածի մեծ դարատափից Ապարանի լայն  
հովտի բացվող տեսարանը վերին աստիճանի նկարա-  
գեղ է»:

Հմայված Արագածի հրաշագեղ տեսարաններով,  
դիտնական իր նույն աշխատութեան մեջ շարունա-  
կում է.

«Այդպիսի մի սիրուն, ահեղ և վայրենի պատկե-  
րից բաժանվելն ինձ համար դժվար եղավ. ես իմ ու-  
ղեկիցներին օթևան ուղարկելուց հետո, երկար ժամա-  
նակ այդ նկարչական դիրքը քննեցի իմ հայրենակից-  
ներին ներկայացնելու համար, որոնք չեն կարող ան-  
ձամբ Հայաստան դալ ճանապարհորդելու...»:

Մի ուրիշ տեղ նա գրում է.

«Ալպյան երկրների մեջ Հայաստանում շատ դե-  
ղեցիկ է Արագածի մեծ դարատափը: Կովիլասի մեջ  
չկա մի ուրիշ տեղ, որ ծաղիկների պեպեսութունով և  
շատութունով, աղբյուրների առատութունով և ամա-  
ռային օդի քաղցրութունով հավասար լինի Արագա-  
ծին»:

Ապա՝ «Ինձ դժվար եղավ այս առողջ, դուր և ա-  
մառվա դվարթ ու ծաղկած լեռնագավառը թողնել և  
նորից իջնել Վրաստանի հովիտների մեջ տապալկեն օդ  
շնչելու»:



1845 թվականի հուլիսի 29-ին Արարատի գաղա-  
թը բարձրանալու փորձ կատարեց Խաչատուր Աբով-  
յանի ուղեկցութեամբ երկրաբան ակադեմիկ Աբիսը,



Նկ. 2. Ալտինիդի տեխնիկա. 2. ժայռային մուրճ, 1. ժայռյա  
կեռ, 4. սառցյա մուրճ, 5. ժայռային տեխնիկա, 6. փական:



որը նույն թվականին Արարատի անհաջող վերելքից հետո այս անգամ հաջողությամբ բարձրացավ Արագածի գագաթը և ուսումնասիրությունն կատարեց բոլոր կողմերից:

Մեր լեռների ուսումնասիրությունն այնքան գրավեց ակադեմիկ Աբիխին, որ կարճ ժամանակով նախատեսած նրա գիտական գործուղումը տևեց 30 տարուց ավելի և հարստացրեց գիտությունը մի շարք ծավալուն և խոր ուսումնասիրություններով, նվիրված Կովկասյան լեռների երկրաբանական կառուցվածքին: Իր այս բոլոր ուսումնասիրություններից հետո, ակադեմիկ Աբիխը Արագածի մասին իր մի աշխատություն մեջ գրում է.

«Արագածը զանազանվում է Հայաստանի և Փոքր Ասիայի իր նման լեռներից և իր առանձնահատկությունների շնորհիվ է, որ նա ստացել է առանձին ազգագրական նշանակություն, լինելով իբրև կենտրոնավայր և օրրան հայ ժողովրդի:

Նրա բնության բանաստեղծական տեսարանները, որոնցով դեռևս 1500 տարի առաջ Մովսես Խորենացին արդարացրել է Հայաստանի հիմնավորումը Արագածի վրա, մնացել են մինչև օրս անփոփոխ»:

1893 թվի հուլիսի 25-ին Արագածի գագաթներն է բարձրացել և հիմնական ուսումնասիրությունների ենթարկել այն տոպոգրաֆիական և աշխարհագրական տեսակետից ուս հայտնի ալպինիստ և ռազմական տոպոգրաֆ Ա. Պաստուխովը, որն իր այդ ուսումնասիրություններին նվիրված աշխատությունների մեջ գրում է.



«Առաւելտյան ժամը 8-ից 15 րոպե անց մենք հա-  
սանք ամենաբարձր դագաթին, որի բարձրութիւնը  
հաւասար է 13.167 ոտնաշաւի (4096 մետր ծ. մ. բ.)։  
Այստեղից մեր աչքի առաջ բացվեց մի վեհագոյն  
տեսարան։ Մեր ոտքերի տակ բացված էր աշխարհի  
ամենաբարձր խառնարաններից մեկի անդունդը, որի  
մեջ փոխանակ կրային լավայի, հանդշում են մշտնջե-  
նական ձյան կույտերը։ Դեպի արեւմուտք և հարավ  
Արագածի լանջերի վրա, զմրուխտագոյն կանաչների  
մեջ փայլում էին լեռնային լճեր, որոնց շուրջը փռված  
էին գեղատեսիլ քրդական վրանների խմբակները։

Ավելի հեռուներում երևում են առանձին բլուրնե-  
րի բարձունքները, իսկ նրանց հետևում, ինչպես ծով,  
փռված էր Արարատյան մշուշապատ հովիտը, որի  
ծայրամասում բարձրացած էր բիբլիական հսկան, որի  
դագաթը մինչև կապույտ երկինքն էր համբարձած»։

1912 թվականին Արագածի դագաթը բարձրացավ  
հայ ժողովրդական երգի և երաժշտութեան խոշորա-  
գոյն ներկայացուցիչ Կոմիտասը։ Նրա վերելքը տևեց  
6 օր։

Այդ վերելքի մասին գրված մի նկարագրութեան  
մեջ կարդում ենք.

«Կոմիտասը... շատ ավելի դյուրութեամբ էր քայ-  
լում, քան մենք... Հայտնի էր, որ նա սպարտական  
կյանք էր վարում...

Նա ինձնից միշտ առաջ էր ընկնում... Ժամը  
մեկին հասանք մեր նպատակին՝ Արագածի շորս գա-

\* Пастухов, Восхождение на Алагез, изд. Кавказского  
геогр. об-ва № 12, 1896, выпуск II, стр. 85—96.





գաթներից մեկի գլուխը և ուրախության աղաղակներով սկսեցինք մեր հաջողությունը արտահայտել: Կոմիտասը... Իր հիանալի ձայնով սկսեց երգել, կարծելով, թե իր ձայնը կհասնի ձորում մեզ սպասողների ափանջներին»:

Այնուհետև նկարագրության հեղինակը պատմում է, թե ինչպես Կոմիտասը օդնեց նրանց անցնելու վտանգավոր սառցյա ձեղքվածքի վրայով:

«Ձյունը հալվում էր, նրա տակից աղբյուրակներ էին հոսում քշքշալով: Կարող էր ձյան տակը բոլորովին դատարկ լինել, մեր ծանրություններից կոտրվել և գահավիժել, մեզ էլ հետը տանելով... Կոմիտասը... ավելի խիզախ էր: Նա վերցրեց իր փայտը և ղգուշությամբ շոշափելով ձյան ամբռնությունը, անցաւ մյուս կողմը: Նա էլ հետևեցի նրա օրինակին և մենք ազատված էինք»\*:

\* \* \*

Սակայն միայն մեր օրերում, Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց հետո հնարավոր եղավ ուժեղ և լայն շափերով ծավալել ալպինիստական բարձրալեռ արշավները և Արագածը դարձնել հազարավոր ալպինիստների վերելքների լավագույն օբեկտը:

Նվ Արագածն սկսեց իր գագաթների աղամանդելույսերը ամբողջ ուժով փայլփլեցնել միմիայն մեր օրերում: Նրա բարձունքներն սկսեցին մագլցել հար-

\* «Արարատ», 1912 թ., էջ 64:





Նկ. 3. Վարդգէս պարանոյ:



չուրավոր և հազարավոր աղախնիստներ և տուրիստներ, սովետական դիտնականներ և հետազոտողներ, նրա պատմության իսկական ստեղծողները՝ սովետական մարդիկ, վերածնված երկրի հարազատ որդիներն ու դուստրերը, մեր մեծ սովետական երկրի բոցավառ հայրենասերները:

Այն, ինչի մասին երազում էին հայ ժողովրդի լավագույն զավակները, դարձավ իրականություն: Մեծ դեմոկրատ-ռևոլուցիոններ Միքայել Նալբանդյանը դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսին իր հայտնի «Ներքադործություն» աշխատության մեջ, շահագրգռված լինելով արագածը դիտական խոր ուսումնասիրության ենթարկելու, այն ժողովրդի շահերին ծառայեցնելու հարցով, գրում է.

«Նրանի թե մեկ օր մեր բնագետ եղբայրակիցներին մեկը ուրախացներ մեզ մի ուսումնական շրջանկատ քննությամբ Արագածի որպիսության՝ թե վուլկանության, թե երկրաբանության և թե հանքաբանության վերաբերմամբ:

Իսկ թե չձանձրանա, բացի սոցանից դործ դնել և ջերմաչափ, և ծանրաչափ, և մագնիսյան սլաք, և մանրացույց. եթե ուշադիր լինենք Արագածի բույսերին, տունկերին և նրա վրա ապրող կենդանիներին, այն ժամանակ մեզ կմնա ոչ միայն շնորհակալ լինել նրանցից, այլ և պարծենալ նորանով (այսինքն Արագածով— Վ. Դ.) Եվրոպայի առաջ»<sup>\*</sup>:

Եվ ահա առաջին տնդամ, 1930 թվականին, սո-

---

\* Երկերի ժողովածու, ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատ., 1938 թ., էջ 181:



վետական դիտնականների ջանքերով կառուցվեց Արա-  
դածի բարձր շէնային օդերևութաբանական կայանը  
3250 մետր բարձրության վրա:

Այստեղ տարվա բոլոր ամիսներին, մասնադետ  
դիտողների ուժերով կատարվում են չափումներ և  
հաշիվի են առնվում բոլոր երևույթները, որոնք վերա-  
բերում են օդի ճնշմանը, ջերմությանը, խոնավությա-  
նը, ամպամածությանը, քամիների ուղղությանը, մըթ-  
նոլորտային տեղումներին և այլն:

Այդ ուսումնասիրություններն ունեն խոշոր դի-  
տական և դործնական նշանակություն ո՛չ միայն Ա-  
րադածի, այլև Սովետական Հայաստանի ու Անդրկով-  
կասի մյուս ռեսպուբլիկաների ժողովրդական տնտե-  
սությունների հետ կապված մի շարք կարևոր հարցերը  
կոորդինացված կարգով լուծելու տեսակետից:

Այստեղ 3207 մետր բարձրության վրա, գլխավոր  
գագաթից երեք և կես կիլոմետր հեռու ընկնում է Արա-  
դածի Սև լիճը, որի շրջապատը հավասար է 1150  
մետրի: Հեռվում, դեպի հարավ-արևմուտք երևում են  
Արադածի մյուս լեռնային՝ Բագու և Թանիշ մեծ լճերը,  
իսկ շորս կողմը բազմաթիվ մանր լճեր ու լճակներ.  
սրանց թիվը Արադածի վրա հասնում է հարյուրի,  
որոնցից շատ քչերն են ամառը շորանում, և որոնց  
ջրերը հատակ, մաքուր և առողջարար են:

Սև լճից ճանապարհը գնում է Քարածովեր կոչ-  
ված վիմաքարերի վրայով դեպի հարավ-արևմտյան և  
արևմտյան գագաթները: Այս գագաթների Թամբարդից  
բացվում է մի հիասքանչ տեսարան դեպի Արադածի վիթ-  
խարի խառնարանը, որն ունի երկու կիլոմետր երկարու-  
թյուն և մեկ ու կես կիլոմետր լայնություն և որի խորու-



թյունն ամենափոս տեղում հասնում է մոտ 460 մետրի։  
Ներքևում աղմուկով գահավիժում են դեպի Գեղհո-  
վիտ երեք արագահոս ջրվեժներ, որոնցից գոյանում է  
Գեղհովիտ գետակը, կամ ինչպես տեղացիներն են  
ասում՝ «Դալի շալը»։

Խառնարանից դեպի ստորոտները ճառագայթաձև  
տարածվում են անդնդախոր բացվածքներ, որոնք ա-  
ռաջացել են շնորհիվ գաղաթներից հոսող ջրերի և  
բնության այլ քայքայիչ տարրերի և կաղմել են խոր  
ձորեր։

Խառնարանի վերևում նկատվում են սառույցների  
գոտիներ, իսկ ներքևում՝ սառցյա ճեղքվածքներ, որոնց  
միջից հոսում են կարկաշահոս ջրերը։ Արագածի խառ-  
նարանն առատ է բազմազան և բազմազույն քարա-  
տեսակներով՝ մոխրագույն, կարմրագույն և որոնց  
վրա ոտը դնելիս խրվում է մեջը և հետ տանում, որ  
շատ հոգնեցուցիչ է։ Այսպես է մանավանդ արևմտյան  
գաղաթից դեպի հյուսիսային գաղաթը տանող լանջը,  
հարուստ հրաբխային մոխիրներով և այլ քարակար-  
կառներով։

Արագածի վրա այժմ այլևս չկա մի բլուր, բար-  
ձունք, անմատչելի ժայռ կամ գաղաթ, որի վրա ոտք  
չլինի դրած սովետական մարդը։

Եթե հին կուլտուրան բարձրանում էր երկու-երեք  
հազար մետր բարձունքներ, այնտեղ ժայռերի վրա  
կառուցելով անառիկ ամրոցներ, ելնելով լոկ պաշտ-  
պանական նպատակներից, ապա, նոր, սովետական  
կուլտուրան ավելի բարձր լեռնագագաթներ է տիրում,  
հիմնելով այնտեղ գիտա-հետազոտական կայաններ,  
որի արդյունքները ծառայում են ժողովրդի շահերին։





Նկ. 4. Արագածը Գեղձովխախցի



Այդ ամենը հնարավոր դարձավ գործի վերածել սովետական անվեհեր հետազոտողների և ալպինիստների ջանքերի շնորհիվ:

1932 թվականին, Միութենական Գիտությունների Ակադեմիայի գիտական էքսպեդիցիան ալպեմիկ Լեվինսոն-Լեսսինգի գլխավորությամբ լուրջ և մանրազնին ուսումնասիրության ենթարկեց Արագածը, որը հիմք ծառայեց հետագա մի շարք ուսումնասիրությունների համար:

Արագածի գիտական էքսպեդիցիաների ուսումնասիրությունները ընդգրկում են մի շարք կարևոր հարցեր, որոնք վերաբերում են լեռան աշխարհագրական դիրքին, դեոլոգիային, հիդրոլոգիային, մթնոլորտային երևույթներին, ֆլորային ու ֆաունային և մի քանի այլ գիտական և գործնական խոշոր նշանակություն ունեցող հարցերի:

Այդ տեսակետից նշանակալից է սովետական գիտնականներ՝ ալպեմիկոս Լեվինսոն-Լեսսինգի, ալպ. Լեբեդևի, դեոլոգիայի դոկտոր-պրոֆ. Հ. Կարապետյանի, ալպ. Պաֆֆենգուլցի, Հայկ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի մի շարք գիտական աշխատողների (Նարինյանի և մյուսների) շատ արժեքավոր աշխատանքները, որոնք հանդիսանում են լավագույն ավանդը Արագածի մասին ստեղծված գիտության մեջ:

\*  
\* \* \*

Հայաստանում ալպինիստական լեռնային արշավներ սկսվում են կազմակերպվել 1928 թվականից: Երևանի նախկին դավառի հայրենագիտական ըն-



կերությունը (այն ժամանակ գավառագիտական ընկե-  
րություն), 1928 թվի օգոստոսի 10-ին կազմակերպեց  
շորսօրյա էքսկուրսիա 40 հոգու մասնակցությամբ դե-  
պի Արագածի գագաթը հետևյալ մարշրուտով՝ Երևա-  
նից—Բյուրական (25 կիլոմետր), այնտեղից գագաթը  
(15 կիլոմետր) և ապա վայրէջք՝ Արթիկ (15 կիլո-  
մետր), Արթիկից—Երևան (180 կիլոմետր—գնացքով):

Այդ արշավի կազմակերպման նախաձեռնությունը  
սրտականում էր Երևանի այն ժամանակվա գավառա-  
գիտական (հայրենագիտական) ընկերության նախա-  
գահ պրոֆեսոր Ստեփան Լիսիցյանին, որին գործոն  
մասնակցություն էին ցույց տալիս գավառագիտական  
ընկերության աշխատակիցներ՝ Վահրամ Դարյանը և  
Հարություն Թերզիբաշյանը:

Արշավի մասնակիցները հաջողությամբ բարձրա-  
ցան Արագածի հյուսիսային գագաթը և այնտեղ, առա-  
ջին անգամ Արագածի վերելքների պատմության մեջ,  
կանգնեցրին կարմիր դրոշակ:

Այնուհետև արշավներ են կազմակերպվում դեպի  
Արագած Հայաստանի նախկին սովետական առևտրի  
ծառայողների պրոֆմիության վարչության կողմից  
1929 և 1930 թվականների ընթացքում, որի կազմա-  
կերպման և ղեկավարման գործում նշանակալից աշ-  
խատանք կատարեց անխոնջ աշպինիստ Ասատուր  
Ասատրյանը:

1930 թվականին կազմակերպվում է պրոլետարա-  
կան տուրիզմի ընկերությունը, որն սկսում է զբաղվել  
լեռնային աշպինիստական արշավների կազմակերպ-  
ման և ղեկավարման գործով և իրեն կից ստեղծում է  
լեռնային սեկցիա, աշպինիստներ՝ Ասատուր Ասատրյա-



յանի, գեոլոգիայի դոկտոր-պրոֆեսոր Հովհ. Կարապետյանի, Վահրամ Դարյանի և մի քանի ուրիշ ընկերների մասնակցութեամբ:

Այդ լեռնային արշավները հետզհետե կրում են ավելի կազմակերպված բնույթ: Լայն հասարակայնություն է ստեղծվում այդ արշավների շուրջը, նրանցում ընդգրկվում է խոշոր թվով երիտասարդություն՝ բանվորներ, կոլխոզնիկներ և դիտական աշխատողներ, որոնք սիրում են ալպինիզմը և մեծ ոգևորությամբ սկսում զբաղվել ալպինիզմով՝ լեռնային տուրիզմով:

Մինչև 1930 թվականն էլ Հայաստանում դանադան կազմակերպությունների կողմից կատարվում էին լեռնային արշավներ, սակայն դրանք կրում էին պատահական բնույթ, կազմակերպվում էին լեռնային տուրիզմին ծանոթ մի քանի ընկերների նախաձեռնությամբ:

Այսպես, դեռ 1925 թվականի օգոստոս ամսին, Հայկական հրաձգային դնդի հրամկազմից 5 հոգի բարձրանում են Արագածի հյուսիսային դադաթը (4096 մետր ծովի մակերևույթից բարձր):

Վերելքը կատարում են ձիերով մինչև ձորը, որն ստորոտից մինչև դադաթը տանող ճանապարհի կեսից մի քիչ բարձր է: Այնուհետև խումբը բարձրանում է ուղիով:

Դադաթին խումբը կանգնեցնում է կարմիր դրոշակ և թիթեղյա ամանի մեջ գրություն է թողնում վերելքի օրվա մասին:

Իսկական մասսայական ալպինիզմը Հայաստանում սկսում է զարգանալ միայն 1934 թվականից, երբ 147 հոգի բարձրանում են Արագած, այնուհետև Մայ-



մեխ, Հադիս և մյուս լեռները: Սա Հայաստանի ալպինիզմի մասսայական զարգացման առաջին տարին է: Սա առաջին աստղաձև արշավն էր, որը կազմակերպել էր նախկին պրոլետ-տուրիզմի ընկերությունը դեպի Արագածի գագաթները:

Հայտնի է 1935 թվականի հազարի աստղաձև արշավը դեպի Արագածի գագաթները, որը Հայաստանի ալպինիզմի զարգացման պատմության մեջ կմնա որպես մեր օրերի երիտասարդության հերոսության ու խիզախության փայլուն օրինակ: Աստղաձև արշավի նախաձեռնությունը պատկանում էր Հայաստանի Լենինյան Կոմերիտակիությանը: Միայն այդ արշավին մասնակցում էին 156 կին:

Հիշենք 1935 թվականի՝ Հայաստանի 22 լավագույն ալպինիստների արշավը դեպի Կովկասի ձյունապատ հսկա էլբրուսի գագաթը, նվիրված մեր սքանչելի սովետական հայրենիքի՝ Հայաստանի սովետականացման 15-ամյակին: Այդ արշավը, որն անցավ շատ հաջող, Հայաստանի ալպինիզմի պատմության մեջ իր փայլուն տեղն է գրավում:

Այդ արշավով ստեղծվեց ալպինիստների մի նոր կադր, որն այսօր կրում է Սովետական Միության ալպինիստի պատվավոր կոչումը և «ՍՍՌՄ ալպինիստի» կրծքանշանը:

Ինչպես հայտնի է, բոլշևիկների պարտիան և Սովետական Կառավարությունը բարձր գնահատելով էլբրուսի արշավի մասնակիցների կատարած աշխատանքը, նշեցին այն բարձր պարգևներով՝ պատվոգրերով և մի շարք այլ պարգևներով:





Քաղաքի շրջանում գտնվող լճի մոտ



Այնուհետև նշանակալից է Ապարանի կոլխոզնիկ ալպինիստների 1936 և 1937 թվականների արշավը դահուկներով, ձմռան դաժան պայմաններում, ալպինիստ Յա. Մարտիրոսյանի ղեկավարությամբ: Կոլխոզնիկ ալպինիստները Արագածի գագաթին կարմիր դրոշ կանգնեցրին:

Այդ ընկերները նույնպես արժանացան պարգևների:

Մենք շենք ուղում ծանրանալ այն բոլոր արշավների վրա, որոնք կատարվել են վերջին տարիների ընթացքում: դեպի մեր լեռները, դեպի Արագած: Լենինականի, Արթիկի, Ապարանի, Բյուրականի, Վաղարշապատի, Հոկտեմբերյանի մի շարք լավագույն ալպինիստներ ամեն տարի, նույնիսկ ձմռան դաժան պայմաններում բազմաթիվ անգամներ դահուկներով հաջող վերելքներ են կատարել դեպի Արագածի գագաթները:

Այդպիսով, վերջին տարիների ընթացքում մեր բոլոր շրջաններում ստեղծվեցին լեռնային տուրիզմ-ալպինիզմի լավագույն կադրեր: Դրանք ալպինիզմի գործի էնտուզիաստներ են, որոնց թիվը հասնում է հազարների: Սակայն մինչև այժմ բավարար չափով չէ դրված եղել այդ կադրերը ալպինիստական գիտելիքներով զինելու գործը և այդ հանգամանքը անցյալում բացասական ազդեցություն է ունեցել որոշ արշավների հաջող անցկացման վրա:

Մասամբ դրա և տուրիստական կազմակերպության որոշ ղեկավարների անփութ լերաբերմունքի հետևանքով էր, որ տեղի ունեցավ 1935 թվականի Արագածի վերելքի դժբախտ պատահարը:



Այստեղ տեղին է հիշատակել, որ նույն՝ 1935 թվականին հազարի աստղաձև արշավը դեպի Արագած հաջողությամբ պսակվեց գլխավորապես այն պատճառով, որ այդ արշավի կազմակերպմանը մեծ և անմիջական մասնակցություն ցույց տվեցին Հայաստանի Կոմերիտիությունը և տուրիստական ակտիվը:

Արագածի լանջերին օթևանների բացակայությունը մինչև այժմ էլ լուրջ խոչընդոտ է հանդիսանում մասսայական ալպինիզմի զարգացմանը մեզ մոտ:

1935 թվի ձմեռային արշավի անհաջող վախճանը ցույց տվեց, որ Արագածի լանջին օթևան լինելու դեպքում մենք խոշոր չափով օժանդակած կլինենք լեռնային տուրիզմի-ալպինիզմի մասսայական զարգացմանը և նախապես կանխած կլինենք բոլոր դժբախտ դեպքերը:

Նման օթևաններ կառուցված են Կովկասի և Միություն մի շարք ձյունապատ լեռների լանջերին: Վաղուց ժամանակն է, որ մեզ մոտ ևս այդ խնդիրն ստանա իր գործնական լուծումը:

Համամիութենական Կենտգործկոմի 1935 թվի որոշմամբ վերացվեցին պրոլետարական տուրիզմի և էքսկուրսիաների ընկերությունը, իսկ նրանց ֆունկցիաները հանձնվեցին պրոֆմիութենական կազմակերպություններին:

Ալպինիզմն անջատվեց և այդ գործի ղեկավարությունը հանձնվեց ԺԿԽ-ին կից Ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի կոմիտեին: Այդ բաժանումով տուրիստական աշխատանքներն ավելի լայնացվեցին ու ծավալվեցին, ամրապնդվեցին ալպինիզմի նյութական բազան և լեռնային տուրիզմը դարձավ աշխատավորու-



թյան հանդստի կազմակերպման լավագույն միջոցներից մեկը:

Արագածն իր շորս ձյունապատ հրաշալի գագաթներով, իր քաղցրահամ ջրերով, ջրվեժների կասկադով, դարձավ Սովետական Հայաստանի ալպինիստների սիրած լեռը:

\*  
\* \* \*


1948 թվականը Հայաստանի ալպինիստներն սկսեցին Արագածի վերելքներով: Օգոստոս ամսին կայացավ առաջին վերելքը: Արագածի գագաթի վրա, մի ժայռի տակ, բացվեց ալպինիզմի ռեսպուբլիկական սեկցիայի հերթական նիստը: Սեկցիայի նախագահը շնորհավորելով արշավի մասնակիցներին հաջող վերելքի համար, առաջարկեց, ի նշանավորումն հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանի մահվան 100-ամյակի, Արագածի հյուսիսային գագաթն անվանել «Աբովյանի գագաթ»:

Նույն թվականի սեպտեմբեր ամսին Համամիութենական Լենինյան Կոմերիտմիության 30-ամյակին նվիրած մասսայական դահուկային արշավ կազմակերպվեց դեպի Արագածի գագաթը: Արշավին մասնակցեցին 105 դահուկավորներ, որոնցից 16-ը՝ աղջիկներ: Արշավի բոլոր մասնակիցներն էլ հաջող վերելք կատարեցին Արագածի բոլոր գագաթները:

Վերադառնալով արշավից, ալպինիստների սեկցիան կազմակերպեց ֆուտո-ցուցահանդես, որն արտացոլում էր ալպինիզմի հաջողություններն Հայաստանում:

Հայաստանի լեռնային ռելեֆը բազմազան է ու





Նկ. 6. Ալպինիստները ձի խուճբ Արագածի ն. Արովյանի անվան դադաթխն:



հարուստ, որը և սպորտային բոլոր տեսակի բարձրա-  
լեռ ալպինիստական արշավների համար ունի լավա-  
դույն պայմանները:

1949 թվականի ձմեռը՝ Հայաստանի ալպինիստ-  
ներն սկսեցին մի շարք բարձր լեռնային վերելքներով:  
Դրանով մեր ռեսպուբլիկայի ալպինիստների առաջ  
դրվում են ավելի լուրջ և կարևոր խնդիրներ՝ դար-  
դացնել մեր երկրի համար յուրահատուկ ձմեռային  
ալպինիստական սպորտի նոր ձևը — բարձրալեռ դա-  
նուկային և լեռնաճգֆային ալպինիզմը:

Ռեսպուբլիկայում ունենք 22-ից ավելի լեռնաշղ-  
թաներ և նույնքան էլ լեռնանցքներ, որոնք ձմեռվա  
որոշ ամիսներին ձյունափակ են լինում: Այդ տեսա-  
կետից խոշոր նշանակություն է ստանում լեռնադա-  
հուկային և լեռնանցքային ալպինիզմի դարդացման և  
լայնորեն ծավալման դործը:

1949 թվի հունվար ամսին կազմակերպվեցին  
ալպինիստ երկու լեռնադահուկային, լեռնանցքային  
արշավներ: Արշավներից մեկն ուներ հետաքրքիր մարշ-  
րուտ՝ Նրեանից Ծաղկաձոր, այնտեղից Միսխանայի  
լեռնաշղթայի վրայով դեպի Ալիբեկի լեռնանցքը, և  
վերելք դեպի դադաթը: Մյուս արշավը կատարվեց մի  
նոր մարշրուտով, ցրտաշունչ ձմռան պայմաններում  
դեպի Մեյդանի լեռների Փիր-դաղ դադաթը: Այդ ար-  
շավի ժամանակ ալպինիստները հաղթահարեցին մի  
քանի լեռնանցքներ, հաջողությամբ բարձրացան Փիր-  
դաղի դադաթը և ցույց տվին սովետական երիտասար-  
դությանը հատուկ տոկոսնություն, վճռականություն,  
հայրենասիրություն և գծվարություններ հաղթահարե-  
լու մեծ կամք: Սովետական բանակի 31-րդ տարեդար-



ձը՝ փետրվարի 23-ը Հայաստանի ալպինիստները նշեցին մի լեռնանցքային արշավով, որը մինչև այժմ կատարված լեռնանցքային արշավների մեջ եղակի նշանակութուն ունի: Այդ լեռնագահովային ալպինիստական անցմանը մասնակցեցին ռեսպուբլիկայի 36 լավագույն ալպինիստներ, ալպինիզմի ավագ հրահանգիչ Գալուստովի ղեկավարությամբ: Նրանք Արագածի արևմտյան լանջով վերելք կատարեցին դեպի նրա բոլոր գագաթները, և այնտեղ հանդիպում ունեցան ու համատեղ վերելք կատարեցին Վրաստանի ալպինիստների խմբի հետ:


1949 թ. առաջին անգամ կազմակերպվելու է բարձր լեռնային ալպինիստական ճամբար Արագածի վրա, Գեղհովիտում, որտեղ ալպինիստական տեխնիկայի տիրապետման հետ միաժամանակ 200 ալպինիստներ վերելքներ են կատարելու Արագածի բոլոր գագաթները և ռադամնասիրելու են Արագածի շրջակայքը:

Միաժամանակ Հայաստանի ավելի քան տասը հազար ալպինիստներ վերելքներ են կատարելու դեպի Հայաստանի մի շարք լեռները՝ բոլորովին նոր մարշրուտներով, այսպես օրինակ՝ Զանգեզուրի լեռների անմատչելի գագաթ համարվող Կապուջիղը, Աղմաղանի լեռների Կարմիր-լեռ կոչված դագաթը, Փամբակի լեռների Սայմեիս գագաթը, Ալիբեկ, Աբա և Հադիսի լեռները:

Ռադամնասիրելով և հայտնաբերելով նոր մարշրուտներ այս լեռների գագաթներին, Հայաստանի ալպինիստները այդպիսով կատեղծեն ամենալայն պայմաններ ամեն տեսակի մասսայական վերելքների



համար և սովելի լայն մասսաներ կներդրավեն ալպի-  
նիստական շարժման մեջ:



Մեր լեռնային արշավները, որոնք կատարվել են  
դեպի Հայաստանի լեռները և դեպի Էլբրուս, ամեն ան-  
գամ չէ, որ հետապնդել են գիտա-հետազոտական  
նպատակներ:

Այդ արշավներից շատերը կրել են միակողմանի,  
տուրիստական բնույթ: Սա ես ասում եմ միայն լեռ-  
ներն ուսումնասիրելու, հետազոտելու տեսակետից:

Անշուշտ այդ արշավների ընթացքում մեր ալպի-  
նիստական ակտիվը բազմակողմանի օգտակար աշ-  
խատանք է կատարել մոտիկից ծանոթանալով մեր  
սոցիալիստական հոյակապ կառուցումներին, ազիտա-  
ցիոն-պրոպագանդիստական աշխատանք է կատարել  
կոլխոզնիկների հետ ունեցած հանդիպումների ժամա-  
նակ՝ գարնանացանի, բերքահավաքի և այլ կարևորա-  
գույն կամպանիաների կապակցությամբ: Նրանք  
ծանոթացել են Հայաստանի պատմական վայրերի  
հետ և այդ մասին զրույցներ կազմակերպել գյուղերում:  
Այդ խնդրում խոշոր ծառայություն է մատուցել նախ-  
կին պրոլետարական տուրիզմի և էքսկուրսիաների  
ընկերության (ՕՊՏԷ) կից կազմակերպված գիտական  
խորհուրդը, որին մասնակցել են մեր լավագույն գի-  
տական աշխատողները:

1936 թվականին արևի խավարումը դիտելու նպա-  
տակով կազմակերպվեց մի լեռնային արշավ դեպի  
Հադիս սարը, որտեղից ալպինիստները դիտեցին արևի  
խավարումը: Վերելքի նախօրյակին արշավի մասնա-





Նկ. 7. Աղակներ խամսերը Արագածի լճ. Արուսեանի անվան գաղաթիկին:



կիցները դիտական զրույց կազմակերպեցին Զառ-  
դյուղի կոլխոզնիկների համար արևի խավարման մա-  
սին:

Գիտական խոշոր աշխատանք է կատարված Ա-  
րագածի լեռնային արշավների ժամանակ: Այդ արշավ-  
ների ընթացքում մեծ տեղ է տրվել Արագած սարի  
ուսումնասիրությանը:

Այսպես՝ այդ արշավների մասնակիցների առաջ  
դրված են եղել հետևյալ կոնկրետ խնդիրները:

1. Բազմակողմանիորեն ուսումնասիրել Արագածի  
ալպինիստական մարշրուտները և օբեկտները:

2. Ճշտել հանքային աղբյուրների ցուցակը:

3. Ճշտել ծծմբի հանքերի առկայությունը և նրանց  
օգտագործման հնարավորությունները:

4. Ճշտել Արագածի գագաթների, ձորերի, հեղե-  
ղատների, լճակների տեղական անվանակոչություն-  
ները:

5. Անվանակոչել Արագածի մեծ ջրվեժը և պար-  
զել նրա օգտագործման հնարավորությունները:

Բացի դրանից, մարշրուտներին մասնակցող ա-  
ռանձին խմբակներն ուսումնասիրել են Արագածի  
բուսական զոնաները, բույսերի տեսակները, քոչվորա-  
կան կյանքը, խառնարանի հավիտենական ձյունը,  
հին սառցադաշտերի հետքերը և մի քանի այլ հետա-  
քերքի՝ հարցեր:

Առաջադրված այդ խնդիրները թեև կատարված  
են, բայց ամբողջ աշխատանքը չի ամփոփված և չի  
արձանագրված: Ինչ վերաբերում է մարշրուտների  
խնդրին, սա ամենադրականն է այդ աշխատանքների



մեջ, որ կատարված է Արագածի արշավների ընթացքում:

Այսպես, հայտաբերված և ճշտված են հետևյալ մարշրուտները.

1. Ապարանից դեպի հյուսիսային գագաթը — խառնարան և վերադարձ Ղազնաֆարի վրայով:

2. Արթիկից դեպի հյուսիս-արևելյան գագաթը — խառնարան և Ղազնաֆարի վրայով վերադարձ:

3. Բյուրականից Սև լճի վրայով դեպի Արագածի հարավ-արևելյան գագաթը, այնտեղից խառնարան և Ղազնաֆարի վրայով վերադարձ:

4. Ղազնաֆարից դեպի խառնարան և հարավ-արևելյան գագաթը և Սև ու Բագու լճերի վրայով վերադարձ Արթիկ:

Այնուհետև, խոշոր արժեք է ներկայացնում Արագածի վրա ընկած մի շարք անանուն օբեկտների անվանակոչումը, որի մասին Հայկական ՍՍՌ Կենտգործկոմը 1934 թվի հոկտեմբերի 17-ին հատուկ որոշում է ընդունել:

Նկատի ունենալով Արագածի շուրջն ստեղծված խոշոր հետաքրքրությունը և ելնելով հետագա արշավների հաջողությունն ապահովելու անհրաժեշտությունից, Հայկական ՍՍՌ Կենտգործկոմը հարգեց նախկին Պրոլետարական տուրիզմի և էքսկուրսիաների ընկերության Հայաստանի կազմակերպության միջնորդությունը, հաստատեց հետևյալ անանուն օբեկտների անվանակոչումը:

1. Արագածի գլխավոր խառնարանից դեպի Ղազնաֆարի ձորը (Գեղհովիտ) հոսող երեք ջրվեժներն անվանակոչել՝ ա) Վերին, բ) Միջին, գ) Ներքին:



2. Հյուսիսային գագաթից հոսող (Քաղցր ջրի հովտում) ջրվեժն անվանակոչել «Տուրիստ» ջրվեժ:

3. Արագածի հինգերորդ՝ ամենավերջ գագաթի ներքև եղած տասը լճակների (2 մեծ և 8 փոքր) հովիտն անվանակոչել՝ «Լճակների հովիտ»:

4. Շիրադալա և Ղազնաֆար գյուղերի մեջտեղում գտնվող Լուսադբյուրի մոտիկ բերդն անվանակոչել «Լուսաբերդ»:

5. Ղազնաֆար գյուղի հանդիպական բարձունքների վրա գտնվող անանուն լիճը, որին տեղացիները կոչում են լճում խեղդված համագյուղացի Ամրոյի անունով, ընդառաջելով ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի բրիգադի ցանկությանը, անվանակոչել՝ «Լեռնաբերդի լիճ»:

6. Ղազնաֆարի կամ Դալիշայի հովիտն անվանակոչել համաձայն Շոպենի հիշատակության՝ «Գեղհովիտ»:


7. Տուրիզմի ջրվեժի հովիտն անվանել՝ «Քաղցր ջրի հովիտ» (նկատի ունենալով այն, որ տեղացիները հոսող ջուրն անվանում են «Քաղցր ջուր»):

Խոշոր գիտական արժեք է ներկայացնում 1934 թվի տատղաձև արշավի ժամանակ մարշրուտի ղեկավարներից մեկի հայտնաբերած նշանագրերը Արագածի վրա, Բագու լճի մոտ, որը գիտական և պատմական մեծ նորութուն էր:

Ինչպես հետազայում պարզվեց, այդ նշանագրերը (այժագրերը) պատկանում են Հայաստանի այլ վայրերում և Արագածի մյուս մասերում հայտնաբերված այժագրերի խմբին և ունեն շատ կարևոր պատմահնագիտական նշանակություն:



Մի քանի դիտական աշխատողների եղբայրացու-  
թյամբ, այդ նշանագրերը մինչև այժմ հայտնաբերված



Նկ. 8. Ալախիստական հանդերձանք՝ 1) սառցահատ, 2) ակնոցներ,  
3) երկաթյա հանկեր, 4) լեռնային կոշիկներ, 5) պարան,  
6) մեղքի պայուսակ:



նախահայկական նշանադրերի մեջ համարվում են ամենահինը և հավանաբար հետադաշում կատարելագործվելով վերածվել են այժազրերի:

Այդ հայտնաբերումը ուշադրության արժանացավ Հայկական ՍՍՌ նախկին Կուլտուրայի պատմության ինստիտուտի կողմից:

Ինստիտուտի 1934 թվականի նոյեմբերի 3-ի նիստում հաստատվեց, որ այդ հայտնաբերումը դիտական մեծ արժեք ունի:

Այդ առթիվ ինստիտուտի որոշման մեջ ասված է.

1. Հատուկ դիտական էքսպեդիցիա ուղարկել այժազրերի հայտնաբերման վայրը:

2. Մինչև հիմա հայտնաբերված այժազրերի հետ միասին, այս նոր այժազրերը ևս հրապարակել:

Քարտեզի վրա է անցկացվել Արագածի 5-րդ դագաթը, որը մինչև հիմա նշանակված չի եղել, ինչպես նկատել է նաև ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի բրիգադը, որը լուրջ ուսումնասիրության է ենթարկել Արագածը:

Արագածի լեռնային աստղաձև արշավների և միշտ արշավների մասնակիցները այցելել են պատմական վայրեր, ուսումնասիրել և ծանոթացել են այդ վայրերի պատմության հետ:

Այսպես, նրանք այցելել են՝ Լուսաբերդը, որը գտնվում է Ղազնաֆար և Շիրաղալա գյուղերի միջև, վիշապների բլուրը (Ղըզըլզիարեթ), որի վրա են գտնվում հին հեթանոսական պաշտամունքի առարկաներից՝ վիշապները: Ամասի բերդը՝ Ղազնաֆար և Թաքարլու գյուղերի միջև, Համբերդը՝ միջնադարյան Հայաստանի նշանավոր բերդերից մեկը, Արխաշենի ջրանցքները,



Ախթամար բերդը՝ Ոսկեվազ գյուղի մոտ, նախապատրաստական բազմաթիվ արձանագրություններ և այլն:

Բացի այդ բուրից, համապատասխան մասնագիտությամբ զբաղվողները հավաքել են քարեր, բույսեր, դեղաբույսերի հավաքածուներ, նյութեր Հայկական ՍՍՌ աշխարհագրության և լեռնագրության դասավանդման գծով և բազմաթիվ մի շարք այլ ուսումնասիրություններ:

Այսպիսով՝ մինչև հիմա մեր աշխատավորության լայն մասսաներին անծանոթ Արագածը դարձել է այժմ նրանց ամենասիրելի ալպինիստական վայրերից մեկը:

\* \* \*

Սովետական Հայաստանի միջով անցնող հսկայական լեռների շարանը սովորաբար կոչվում է Փոքր Կովկասյան լեռնաշար կամ Անտիկովկաս:

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեպուբլիկայի հյուսիսից ձգվող լեռնաշարն սկսվում է Խոնավ կամ Մթին լեռների շարունակությունը կազմող Կարախաչի լեռնաշղթայի Լեյլի լեռնագագաթից (3202 մետր ծովի մակերևույթից բարձր):

Այդ լեռնաշարը հարավային և ապա զուգահեռական ուղղությամբ ձգվելով, հասնում է Արաքսի ավերին կամ Իրանի սահմանին:

Փոքր Կովկասի կամ Հայկական լեռնաշարի ընդհանուր երկարությունը կլոր թվով մոտ 500 կիլոմետր է:

Նա ունի բազմաթիվ մանր ու մեծ ճյուղավորություններ, որոնք տեկտոնիկ ծագում ունեն և միանում



են հրաբխային ծաղում ունեցող վիթխարի զանգվածների հետ:

Այս լեռնաշարի լեռնագրության ընդհանուր հարմոնիան լրացնում են առանձին կանգնած հրաբխային հսկաներ և բազմաթիվ մանր ու մեծ գագաթներ, բլուրներ ու բարձրություններ, որոնց խոշորագույն մասին դեռ չի դիպել ալպինիստի ոտքը:

Հայկական լեռնաշխարհի գեղեցիկ կոլորիտը լրացնող համեմատաբար մանր շղթաներն ու գագաթները հետաքրքրական ու հարուստ նյութ կարող են դառնալ ավելի մանրակրկիտ ուսումնասիրության համար:

Ալպինիստական արշավների առանցքը պետք է դառնա այդ հետաքրքիր գագաթների աշխարհագրական, երկրաբանական, բուսաբանական և պատմական ուսումնասիրությունը:

Մենք՝ մինչև հիմա մեր ուշադրությունը բեռնել ենք միայն Արագածի վրա: Այժմ Հայաստանի ալպինիստների հետաքրքրության ու ուշադրության կենտրոնը պետք է դառնան Փոքր Կովկասի կամ Հայկական լեռնաշարի վրա գտնվող մյուս գագաթները:

Այդ հոյակապ լեռնաշարը սկսվում է հյուսիսից Կարախաչի լեռնաշղթայով 20 կիլոմետր երկարությամբ, իր լեյլի (3202) լեռնագագաթով:

Ապա հաջորդում են միմյանց շարունակաբար՝ Զիրուխլույի լեռնաշղթան 35 կիլոմետր երկարությամբ, Աղմաղան լեռնագագաթով (2998 մ.), Բզովդալի լեռնաշղթան՝ 30 կիլոմետր երկարությամբ, Սպիտակ (2119 մ.), Չախչախ (2370 մ.) և մի քանի ուրիշ լեռնագագաթներով:

Փամբակի լեռնաշղթան՝ 85 կիլոմետր երկարու-



Գրականության միջոցով Գ. Գ.





թյամբ, որը ձգվելով արևմուտքից դեպի արևելք հաս-  
նում է Սևանա լճին, Մայմեխ (3093), Խախալ (3165),  
Թեթ Ահմեդ (3100) և մի շարք ուրիշ լեռնագագաթնե-  
րով:

Մեղանի լեռները, Արեգունու կամ Շահ-Դադի  
լեռնաշղթան, Զանգեզուրի լեռնաշղթան, որն ամենից  
երկարն ու բարձրն է ամբողջ Անդրկովկասում և ա-  
ռաջնության տեղը միայն Մեծ Կովկասյան լեռնաշղ-  
թային է զիջում. նրա երկարությունը 200 կիլոմետր է:  
Նրա ամենաբարձր գագաթը Կապուշտուն է, որն իր  
3920 մետր երկնամբարձ սլացումով Արագածից հետո  
երկրորդն է Սովետական Հայաստանում:

Ապա հայտնի են Զանգեզուրի լեռների մի քանի  
գագաթներ, ինչպիսին Ղափլան կամ Այլինգիլ գագա-  
թը՝ 3905 մետր բարձրությամբ, Յաղլուն՝ 3843 մետր,  
Ղաղանդաղը՝ 3858 մետր և այլն:

Աղբաբայի լեռները, Շիրակի լեռնաշղթան, Արայի  
լեռը՝ 2610 մետր բարձրությամբ, որը գտնվում է Արա-  
գածի հարավ-արևելյան կողմում:

Մխիթանայի լեռնաշղթան՝ Ալիբեկ գագաթով  
(2860 մ.) և այլ գագաթներով:

Ծաղկունյաց շղթան, Աղմաղանի լեռնաշղթան 80  
կիլոմետր երկարությամբ, որը ձգվում է հյուսիսից-  
հարավ, Կարմիր լեռ (3104 մ.), Սև լեռ (3146 մ.),  
Ուշ թափա (3252) և մի շարք այլ լեռնագագաթներով:

Հարավ-Սևանի լեռնաշղթան՝ 65 կիլոմետր երկա-  
րությամբ. Դարալագյաղի, Լալվար-Լեջանի, Աղստեֆի,  
Մրդուզի, Շամշադինի, Արեվիքի, Խուստուլի, Քա-  
ջարանցի, Բարքուշատի լեռնաշղթաները:

Հադիսը՝ (2542) Կոտայքում, Քյոթան-Դաղ՝ Ֆան-  
տանի մոտ (3211) և այլն:



Ահա Հայկական կամ Փոքր Կովկասյան լեռնաշարը, որի վրայով պիտի անցնեն Հայաստանի ալպինիստներն առաջիկա տարիների ընթացքում և երկրի հարուստ ընդերքն ի սպաս դնեն մեր սոցիալիստական շինարարությանը, ուսումնասիրելով այդ լեռները երկրաբանական, աշխարհագրական, բուսաբանական, պատմական, ջրերի օգտագործման տեսակետից և այլն:

Նրանք պետք է ուսումնասիրեն լեռնային ճանապարհները, ճշտեն անվանակոչություններն ու քարտեզները, և հայտնաբերեն նորություններ: Այդ տեսակետից խոշոր նշանակություն պետք է տալ առաջիկա տարիներում նախատեսված արշավներին դեպի Կապուջուղ, Արագած, Աղմաղան, Մայմեխ, Մխիթանա և մյուս լեռները:

Առանձնապես խոշոր հետաքրքրություն է ներկայացնում Կապուջուղը:

Կապուջուղը վաղուց է ինչ գրավում է Հայաստանի ալպինիստների ուշադրությունը: Բայց մինչև հիմա չի հաջողվել լինել նրա դագաթին և գծել նրա դագաթը բարձրանալու մարշրուտները:

Այդ լեռնադագաթով հետաքրքրվել է և սկսել է նրանով զբաղվել Հայաստանի Երկրաբանական ինստիտուտը, որի հետ միասին այդ լեռնադագաթի գեոլոգիական ուսումնասիրությունը պետք է կատարեն նաև մեր ալպինիստները: Դա կլինի խոշորագույն մի գիտական աշխատանք Հայաստանի ալպինիստների համար:

Խոշոր նշանակություն ունի նաև Աղմաղանի լեռնաշղթայի, առանձնապես նրա սառցադաշտերի և



ձյունաշերտերի ուսումնասիրությունը ձմեռային ալպինիստական սպորտի զարգացման տեսակետից:

Տարեց-տարի բազմապատկւում է Սովետական ալպինիստների թիվը, ընդգրկելով քաղաքի ու գյուղի աշխատավորության նորանոր մասսաների: Ալպինիզմը ֆիզկուլտուրայի հետ միասին ժողովրդական առողջապահության գործում պրոֆիլակտիկ միջոց հանդիսանալով, միաժամանակ կենցաղի և մարդկանց սոցիալիստական վերափոխման և կոմունիստական դաստիարակության կարևոր մի լծակ է, կուլտուրական և քաղաքական մի խոշոր գործոն, իսկ ալպինիստները՝ մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու պատրաստակամ, խիզախ և համարձակ սովետական հայրենասերների պանծալի մի բանակ:

Հազարավոր ալպինիստներ քայլում են Սովետական Միության լայնածավալ տերիտորիայում, ցնծադին և աշխույժ արձագանքելով բնության կանչին, այրվելով ու կոփվելով առողջարար արևի ճարագայթների տակ, դաշտերի ու լեռների մաքուր և թարմ օդի մեջ: Նրանք, ալպինիստները, նոր լիցք են ստանում՝ մեր արևոտ, սոցիալիստական Հայրենիքի հետագա ավելի հզորացման և կոմունիզմի կառուցման համար:



## Յ Ո Ւ Ց Ա Կ

**Ալպինիզմի վերաբերյալ հայերեն լեզվով լույս  
ստացած գրականության**

1. Վ. ԴԱՐՅԱՆ, Գ. ՍԱՐՅԱՆ, ԲՈՒԴԱՂՅԱՆ. Արա-  
գածի աստղաձև արշավը, ժողո-  
վածու, Պետհրատ, 1936 թ., էջ 96,  
գիրք՝ 1 ռ.:
2. Վ. ԴԱՐՅԱՆ, Զյունապատ լեռներում (ալպինիս-  
տի օրագրից). Պետհրատ, 1936 թ.,  
էջ 45, գիրք՝ 1 ռ. 20 կ.:
3. » Ալպինիստի հանդերձանքը. Ֆիզ-  
կուլտհրատ., 1937 թ., էջ 24, գի-  
րք՝ 40 կոպ.:
4. » Դեպի էլբրուս. Պետհրատ, 1938 թ.,  
էջ 66, գիրք՝ 2 ռ.:
5. » Ալպինիզմը Հայաստանում. Ֆիզ-  
կուլտհրատ, 1938 թ., էջ 54, գիրք՝  
1 ռ. 50 կոպ.:
6. » Արագածի վրա. (պատանիների  
համար). Պետհրատ, 1939 թ.,  
էջ 34, գիրք՝ 40 կոպ.:
7. » Ծաղկունիք, (պատանիների հա-  
մար). Լուսհրատ, 1939 թ., էջ 40,  
գիրք՝ 1 ռ. 20 կոպ.:
8. » Գավառագիտական ուղեցույց. Լուս-  
հրատ, 1940 թ., էջ 50, գիրք՝ 1 ռ.  
50 կոպ.:
9. » Սովետական դավառագիտության  
խնդիրները. Լուսհրատ, 1939 թ.,  
էջ 70, գիրք՝ 1 ռ.:



## ЛИТЕРАТУРА

1. В. М. Молотов.—Доклад на XVII съезд ВКП(б).
2. Н. И. Крупская.—Воспоминания о В. И. Ленине, Огиз. 1939 г.
3. С. М. Киров.—Восхождение на Казбек и Эльбрус, Журнал „На суше и на Море“, 1939 г., № 12, стр. 7.
4. Под редакцией Черепова — Альпинизм (учебное пособие), Огиз. 1940 г., Москва.
5. В. Абалаков.—Основы альпинизма, Гиз. „Физкультура и спорт“, 1941, Москва.
6. Альпинизм — руководящие материалы, Гос. изд. „Физкультура и спорт“, 1946 г., Москва.
7. Туризм — руководящие материалы, Гос. изд. „Физкультура и спорт“, 1948 г., Москва.
8. А. Гусев.—Эльбрус, Огиз, 1948 г., Москва.
9. Рототаев.—Ушба, Огиз, 1948 г., Москва.
10. Д. М. Затуловский.—На ледниках и вершинах средней Азии, Огиз, 1948 г., Москва.
11. Мысовский.—Спутник туриста, изд. „Физкультура и туризма“, 1937 г., Москва.
12. Под редакцией мастера альпинизма Гущина.—Техника альпинизма за рубежом, Огиз, „Физкультура и спорт“, 1937 г., Москва.
13. Н. Рототаев и И. Юхин.—Альпинизм — Техника передвижения в горах.





Պատ. խմբագիր՝ ԱՐՄ. ԹԱՄԱԶՅԱՆ  
Տեխն. խմբագիր՝ Վ. ԱԼԵԳՅԱՆ  
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՎՖ 01691

Պատվեր №126

Տիրաժ 2000

3 տպագր. մամուլ: 1,1 հեղ. մամուլ  
1 տպագր. մամուլում 25,600 նիշ:  
Ֆորմատ 60×80:

Հանձնված է արտադրության 1949 թ. ապրիլի 10-ին  
Ստորագրված է տպագրության 1949 թ. ապրիլի 27-ին

Հայկական ՍՍՌ Պետական Հեռահա մանկավարժական  
ինստիտուտի ազգային, Երևան, Տեղյան փող. № 127











ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043411



[304]

ԳԻՆԸ 3 Ռ.

A  $\frac{1}{2}$   
7082

В. ДАРЬЯН  
Горные походы  
в Армонии  
Ереван—1949